ունի՝ զիս ընդունի. և որ զիս ընդունի՝ զառաքիչն իմ ընդունի»։ Ոչ զք այսուհետեւ իշխեսցէ տիրել ի վերայ ձեր, ոչ եպիսկոպոս և ոչ վարդապետ, բաց ի Նիկոլէն. այլ ամենեքեան դմա հնազանդ լիցին. ամենեքեան իբր զմի ի միջի ձերում. զոր դա ընդունի և մեք ընդունիմք. և զոր դա արտաքսէ և ի բաց մերժէ՝ և մեք հաւանիմք. զոր դա աւրհնէ՝ աւրհնեալ լիցի, և զոր դա կապէ և արձակէ երկրաւոր և երկնաւոր բանալեաք, կապեալ և արձակեալ եղիցի. ամէն։ Տէրն տերանց հովանաւցի ի ձեզ և ամենայն ազգականաց և բարեկամաց ձերոց, լինել անօթ ընտրութեան և տաճար բնակութեան անմահին։

Գրեցաւ սիրոյ և աւրհնութեան նամակս՝ հազար հարիւր քսան թուին Հայկազեան տոհմի, և յամսեանն օգոստոսի քսան և ութերորդում աւուր, ի Կոստանդինուպոլիս մայրաքաղաքի և արքայարանի. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածամօր Կուսի և քրիստոսաբնակ տաճարի։

ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՑ ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՁԵՌԱՄԲ ԻՄՈՎ, ԳՐԵՑԻ ԱՌ Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՍ։